

լիմայ եւ բազումք 'ի քրիստոնէից ասէ՝ Յոյն Արարացի պատմիչն։ Յետ մոտանելոյ նորա յաղթանակաւ յերուսաղէմ՝ յանդիման եղեւ նմա Սարգիս Պատրիարքն Հայոց հանդերձ եպիսկոպոսօք վարդապետօք եւ միաբանովք իւրովք, եւ յանձն առ հպատակիլ եւ մտանել ընդ լծով ծառայութեան Օսմանցւոց։ Եւ մատուցեալ նմա զհին հրովարտակա Օմարայ Սալահատինի եւ Սուլթանացն Եգիպտոսի, խնդրեաց 'ի նմանէ ըստ տրամադրութեան նոցին շնորհել հրովարտակ, եւ վերատին հաստատել զազգային դարաւոր ժառանգութիւնս եւ զսեփհական իրաւունս։ Հաճեալ արքային ընդ բանս Սարգսի, հրամայեաց գրել հրովարտակ (խաթի Շէրիֆ), եւ ետ զայն ցՊատրիարքն Հայոց, որ սկզբնաւորի այսպէս. « Օղնութեամբ բարձրելոյն Աստուծոյ եւ մարգարէի նորա. 'ի 25 Մէֆէր ամսոյ յերուսաղէմ 'ի տունն Աստուծոյ եկեալ՝ յաղթանակաւ մըտաք 'ի քաղաքն. Սարգիս Պատրիարքն Հայոց խմենայն միաբանովք իւրովք եկեալ 'ի հնազանդութիւն եւ 'ի հպատակութիւն. խնդրեաց 'ի շնորհաց եւ 'ի պարգեւաց իմոց, տիրել Պատրիարքացն Հայոց ըստ նախնի օրինաց եւ վաղեմի սովորութեանց իւրեանց. եկեղեցեաց վանօրէից տաճարաց եւ ամենայն ուխտատեղեաց, ըստ զօրութեան կայսերական դաշնադրոյն մեծին Օմարայ. եւ արքունի հրովարտակացն տուեալ 'ի ժամանակէ անտի Մէլիք Սալահատինի. տիրել այսոցիկ տեղեաց Պատրիարքացն Հայոց, որք նստին 'ի վանս Ս. Յակոբայ », եւ ապա թուէ յականէ յանուանէ զվանօրայս եւ զբաժինս տնօրինական Ս. Տեղեաց եւ զիրաւունս Պատրիարքին, զորս աւելորդ վարկաք մի ըստ միջե կրկնել աստ։ Հրովարտակն գրեալ է յերուսաղէմ, 'ի թուին Հիճրէթի 943 (1516)։ Սա հիմն համարի Օսմանեան կայսերաց վասն երուսաղէմի տուեալ հրովարտակաց։

Սուլթան Մէլիմ տուեալ է նաեւ զայս օրինակ հրովարտակ Պատրիարքին Յունաց. բայց տեսանի 'ի նմա այլայլութիւն բաւից, զոր յետոյ մուծեալ են։ Եւ 'ի միջնորդելոյ քրիստոնէից եղելոց ընդ նմա, ետ նաեւ հրովարտակ կրօնաւորացն Սինայի։

Ահա սոյն օրինակ բարձաւ եւ ջնջեցաւ 'ի միջոյ անուն իրաւք եւ իշխանութիւն Մեմլուք եւ Չէրքէզ Սուլթանացն